ՆԱԽԱԳԻԾ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի N 5-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1.Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 18–ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի աղբահանության պարտադիր լիազորությունը առևտրային կազմակերպության միջոցով իրականացնելու մասին

1.2. Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու՝ բյուջեի վարչական մասին պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

1.3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

1.4. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին

1.5. Ջերմուկ համայնքի զարգացման ծրագիր ներկայացնելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու համաձայնություն տալու մասին

1.6. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքին տրանսպորտային միջոց նվիրելու համաձայնություն տալու մասին

1.7. Բնակարան վարձակալելու և ենթավարձակալության հանձնելու համաձայնություն տալու մասին

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 90-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

1.9. Դրամական հատկացում կատարելու մասին

1.10. Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 9-ի N 3-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին.

1.11. Ջերմուկ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: